ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 76

11 սեպտեմբերի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿԻՑ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԳՆԱՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և քանի որ <<Սինոհիդրո Քորփորեյշն Լիմիթեդ>> ընկերությունը հյուսիս-հարավ ճանապարհի շինարարությունը պլանավորվել էր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի հարող հատվածով սկսել և ավարտել երկու տարվա ընթացքում, ուստի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 5-ի թիվ 38 որոշմամբ տրվեց համաձայնություն <<Սինոհիդրո Քորփորեյշն Լիմիթեդ>> ընկերությանը՝ ճանապարհը ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ-Ձորակապ բնակավայրերի միջով տեղափոխելու վերաբերյալ, բայց այսօր արդեն երեք տարի է, ինչ ճանապարհն անցնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ-Ձորակապ բնակավայրերի միջով և այն գտնվում է ավելի վատ վիճակում, քան նախկինում էր: Ելնելով համայնքի ճանապարհի անմխիթար վիճակից.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝</u>

1. Պահանջել <<Սինոհիդրո Քորփորեյշն Լիմիթեդ>> ընկերությունից ապահովելու ճանապարհի պատշաճ սպասարկում, կտրատումով՝ տաք ասֆալտով նորմալ փոսային նորոգում, ինչպես նաև ապահովել Ձորակապ-Մարալիկ բնակավայրերի միջով անցնող Երևան-Գյումրի, Մարալիկ-Արթիկ ճանապարհի /Գազարինի/ փողոցի ասֆալտով փոսային նորոգում 20 օրյա ժամանակահատվածում, հակառակ դեպքում արգելել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ-Ձորակապ բնակավայրով ճանապարհի անցումը և պատճառած վնասի ու չկատարած աշխատանքի հարցով Անի համայնքապետարանին պարտավորեցնել կատարել վնասված հատվածի չափագրում/ նախագծում/ և դիմել դատարան՝դատական կարգով բռնագանձելու պատճառած վնասի փոխհատուցում <<Սինոհիդրո Քորփորեյշն Լիմիթեդ>> ընկերությունից:
2. <<Սինոհիդրո Քորփորեյշն Լիմիթեդ>> ընկերությանը՝ արգելել բեռնված շինարարական տեխնիկաները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ-Ձորակապ բնակավայրերի միջով երթևեկելը՝ ապահովելով դրանց շարժը տարանցիկ չինական բազայի մոտով անցնող ճանապարհով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ - 10	Դեմ՝ - 0	Ձեռնպահ՝ 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ	բացակա է		
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ	բացակա է		
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ			
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ	բացակա է		
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ	բացակա է		
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ	բացակա է		
ՍԱՐԳՍՅԱՆ ՋԱՎԵՆ			
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 11
Քաղաք Մարալիկ